

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ. Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրական մէջ.

Մեր հասցէն. Тифлисть, Редакция „Мшакъ“. Կամ Tiflis, Rédaction „Mschak“. Տ է Լ է Ֆ օ ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ. Տ է Լ է Ֆ օ ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

«ՄՇԱԿ» ԼՐԱԳԻՐԸ

Ապրիլի 1-ից մինչև տարվայ վերջը կարժենայ Ութ ռուբլի:

Գինը Тифлисть, редакция „Мшакъ“.

Այն անձինք, որոնք վճարել են մինչև ապրիլի 1-ը և ցանկանում են շարունակել լրագիր ստանալը, թող հոգ տանեն վազորօր յայտնելու այդ մասին խմբագրութեանը, որպէս զի լրագրի առաքումը չընդհատվի:

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունվում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Իրագործութեան պահանջը.— ԵՆԲԻՐՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հասարակական հարցեր. Նամակ Կարսից. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Բննիչի յիշատակարանից:

ԻՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԳԱՆԱՆՁԸ

Պաշտօնական հարցազրույթիւնների ստեղծվ Մակեդոնիան խողովում է և անհանգիստ ու բողոքող տարրերը հեռանում են Մակեդոնիայի սահմաններից դէպի Բոլղարիա:

Թիւրքիան վերջին շաբաթների ընթացքում պահում էր իրան համեմատաբար աւելի զիջում: Նա թող սուեց, որ եւրոպական ժանդարմներին կազմակերպվի մեծ պետութիւնների ցուցումների համաձայն: Նա համաձայնեց ներումն շնորհելու քաղաքական յանցանքներին, պայման դնելով, որ նրանք հեռանան Մակեդոնիայի սահմաններից:

Եթէ Թիւրքիայի ցոյց տուած զիջող

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԳՐԱԿԱՆ ՅԵՆԱՍԻՐԱԿԱՆ

Ի

189... թիւն էր, ձեռնարկ ամիսներից մէկը: Ոստիկանական պրիստաւը հարողել էր, որ Ձ. գաւառի Տ. գիւղում սպանված է մի երեւոստարդ հայ Կ. անունով. թէ ոճրագործը և թէ ոճրի պատճառը յայտնի չէին: Հարկաւոր էր սպանվածի դիակը անդամահատել և քննութիւն կատարել: Մի քանի ժամանակից յետոյ մենք վեց ձիւղերն էր, թարգմանա, գաւառական բժիշկը, ֆէլդշերը և երկու ոստիկանական պահապաններ, ուղղում էինք մեր ճանապարհը դէպի Տ. գիւղը «Իւլ-թափա» կոչված դաշտավայրով:

Չմեղը այս «Իւլ-թափա» անունը սարսափ էր ազդում ճանապարհորդների վրա: Համաբերա ամեն տարի այդ դաշտավայրում պատահում էին մարդկային զոհեր: Այստեղ ստատ ձիւն է գալիս ձմեռը և սաստիկ հողմեր են լինում. անա հէնց դա է, որ վտանգ է սպառնում ճանապարհորդին: Ձիւնը ծածկում է սմբողը դաշտավայրը սպիտակ սաւանով. ճանապարհորդը կորցնում է իր ճանապարհը և երբ այդ միջոցին բարձրանում է սաստիկ հողմ, վտանգը անխուսափելի է. ամբողջ 10—15 վերստ տարածութեան վրա խեղճ ճանապարհորդը չէ կարող գտնել ոչ մի ապաստարան, որովհետև այդ տարածութեան վրա չը կայ ոչ մի գիւղ: Հողմը պատեցնում է օդի մէջ ձիւնի անաղին սիւներ և դրանցով ծածկում խեղճ ճանապարհորդին, որը սաստում է ձիւնի տակ, եթէ պատահմամբ օգնութիւն չէ վնասում: Պատում էին մի քանի սրտաճմլիկ տեսարաններ ճանապարհորդների կեանքից, որոնք «Իւլ-թափա» մեռել, փչացել էին այդ տեսակ մահով: Զարմանալի ժողովուրդ է մեր ժողովուրդը. նա միշտ սպասում է, որ իր աւելը ուրիշները հոգան: Վերև յիշած վտան

տրամադրութիւնը շարունակվի և առաջիկայ ամիսներում, այն ժամանակ անկասկած կը թուրանայ մակեդոնական յուզմունքի ոյժը և ապաստամբական խմբերը կը սկսեն կամայկամաց լուծվել, սպասելով բարենորոգութիւնների իրականացման: Թիւրքիայի անցեալը յուսադրական փաստեր շատ քիչ է տուել գաւառական վարչական բարեփոխութիւնների վերաբերութեամբ և հասկանալի է, որ թէ եւրոպական քաղաքագէտները և թէ մակեդոնական շարժման ղեկավարները որոշ ստորիճան կասկածամտութեամբ են վերաբերվում Թիւրքիայի խոստումներին և գնահատում են միայն այն, ինչ որ իրապէս կատարվում է գործնական կեանքի մէջ:

Աչքի առաջ ունենալով այդ կասկածամտութիւնը, պարտաւորակա և դառնում Թիւրքիայի համար ոչ մի յոյս չը դնել այն տպաւորութեան վրա, որ պէտք է գործեն նրա նորանոր խոստումները և յաջորդաբար իրագործել բարեփոխութիւնների այն ծրագիրը, որի վերաբերութեամբ անցեալ տարի Միւրջնոտում կայացել է Ռուսաստանի և Աւստրիայի մէջ համաձայնութիւն և գտել է եւրոպական միւս պետութիւնների կողմից հաւանութիւն:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀՈՍՏՐԱԳՈՎԱԿԱՆ ՀՄՏՅՐ

Գիւղը և բազարը

Ոչ լայ, ոչ խնդու, այլ հասկանալ: Մայիսօգու

Կովկասի գիւղերն ընկնում, քայքայվում են, իսկ քաղաքներն անում, բազմանում:

Գիւղերը դժուար չէ անել. միայն հարկաւոր է Գ. այժմ գաւառական քաղաքի և Որոտ գիւղի մէջտեղը «Իւլ-թափա» մէկ-երկու ապաստարան շինել ճանապարհորդների համար, որոնք համարեա բացառապէս իրանք գիւղացիներն են:

Մեր պահապաններից մէկը անդադար փրկութիւններ էր. երկի նա անբաւական էր, որ տարվայ այդ ժամանակամիջոցին, այն էլ վատ եղանակով, մենք յանդիմութիւն էինք ունեցել բարձրանալ «Իւլ-թափա» դաշտավայրը: Իսկ միւս պահապան քիւրը Մուրադխանը նախատում էր իր ընկերօրը. նա բացատրում էր, որ այդ ճանապարհորդութիւնը «բէփի» համար չէ կատարվում, այլ որպէս ծառայութեան պահանջ և մի և նոյն ժամանակ տալիս էր նրան «ծոյլ», «վախկոտ», «յիմար» և այլ դրանց նման անակամներ:

Շատ հետաքրքիր տիպ էր այդ Մուրադխանը. իր ծառայութեան մէջ քաջ էր և ճշտապահ, «մեծաւորների» առաջ նա խոնարհ էր և վերաբերվում էր մեծ յարգանքով, իրան հաւատարմների հետ յանդուգն էր և հպարտ. իսկ իրանից ցածրների վրա նայում էր սաստիկ արհամարհանքով և առանց հայեցանքի չէր կարողանում խօսել:

«Իւլ-թափա» թէպէտ ձիւն շատ էր եկել, բայց այս անգամ եղանակը հանդարտ էր, հողմ չը կար և մենք առանց փորձանքի հասանք Որոտ գիւղը, որտեղ, փոխելով ձիւնը, շարունակեցինք մեր ճանապարհը և միայն երեկոյան ժամը 8-9-ին հասանք Տ. գիւղը:

Որոտ գիւղը այժմ թրքաբնակ մի փոքր գիւղ է և միայն այդ գիւղի և հարեան Աղուզի գիւղի մէջ գտնվող Որոտայ վանքն է, որ շինված է ճանապարհորդին, որ մի ժամանակ այդ տեղերը եղել են հայաբնակ. այդ յիշեցնում են և ուրիշ մի քանի հնութիւններ, ինչպէս Շէքի թրքաբնակ գիւղում գտնվող հայ եկեղեցու աւերակները և այն, իսկ այս օրերին անց ճարեան հայաբնակ գիւղերի գոյութիւնը: Այստեղ է եղել մի ժամանակ պատական յայտնի Միւնեսայ երկիրը:

Գիւղն ընկնում է: Այդ մասին կէս դար է արդէն գրում են: Գրել են մանր գրիչներ, գրել են ձիւրքի տէր հրապարակաթուղիներ: Միմիայն պահպանողական կոչված կիսակղերական մամուլը չէ որ ողբակոչել է «ճայրենի սիւների»—գիւղերի անկումը: Արտասովել, ախ ու վախ է արել և մեր առաջադէմ մամուլը:

Երեկոյն ընդհանուր է և անուրանալի: Հասարակական խոշոր երեկոյնները կատարվում են դանդաղ, առանց շտապելու: Էվօլյուցիայի օրէնքը շտապել չէ սիրում: Մանրիկ, աննշմարելի փոփոխութիւնները կուտակվում են իրար վրա և մի օր արդէն զգալի է դառնում անցեալի և ներկայի անաղին տարբերութիւնը:

Գիւղի ընկնելն էլ կատարվել է և կատարվում է գանդաղօրէն, սաստիճանաբար: Բայց արդէն մօտիկ անցեալի և ներկայի տարբերութիւնն այնքան է խստացել, որ ամենքը տեսնում, զգում են:

Եթէ ոչ մեր հայրերը, գոնէ մեր պապերը չունէին այդ հարցը: Նրանց օրով գիւղը գիւղ էր, քաղաքն էլ մեծ վիւղ—աւելի ոչինչ:

Իսկ այսօր արդէն այդ երկուսի հակադրութիւնը մեծ է, շատ մեծ, մանաւանդ խոշոր քաղաքների և մանր գիւղերի մէջ:

Երկու, երեք սերունդ շարունակ գիւղերի բնակիչներն աճել են, իսկ նրանց հողերը համարեան մի և նոյնն են մնացել: Սակաւանոգութիւնը տիրում է ամեն տեղ:

Բայց հողը կարող էր ըլն լինել և էլի նոյն չափ հողով կերակրել հինգապատիկ աւելի մարդիկ... Այն, կարելի էր, եթէ բնակիչների աճելու հետ միասին աճէր ու զարգանար ուսումը, տարածվէր գիտութիւնն ու տեխնիկան, արհեստներն ու կուլտուրան: Մի խօսքով՝ այդ հարցը կուլտուրայի պտուղներով: Յաւը հէնց նրանումն է, որ բնակիչներն ա-

Միւս առաւօտ, սպանված դիակը անդամահատելուց յետոյ, որից պարզվեց, որ Կ. սպանված է դաշտին հարուստով, սկզբից վիճակի հարցաքննութիւնը. Կ.-ի ազգականները քննութեան ժամանակ աշխատում էին հաւատացնել, որ նրան սպանել է անյայտ աւազակ, որը իբր թէ մի ինչ որ առիթով դուրս է կանչել նրան տանից փողոց, որտեղ, յարձակվելով փախել, անյայտացել: Կասկածելի բացատրութիւն: Միայն սպանողի կինն էր, որ չէր կամենում ցուցմունք տալ. նա անդադար կրկնում էր, որ Տ. գիւղում նա ոչինչ չէ կարող տեսլ, բայց խոստացաւ գալ ինձ մօտ Գ. գիւղավայրը և այնտեղ ամեն ինչ ազատ պատմել:

Երբ ես Կ.-ի ազգականներին յայտնեցի, որ նրանց բացատրութիւնը շատ կասկածելի է թւում, նրանցից մէկը, որը մի ժամանակ ծառայել էր գանդապահ հիմնարկութիւնների մէջ Երևանի նահանգում և խօսում էր հետո կորտումսում ուսուցիչ լիզուով, ի հաստատութիւն իր ասածի ներկայացրեց մի թուղթ, որի վերջնապիւրէն էր «թուղթ», նրա ասելով, նա ինքն միամտութեան թուղթը, նրա ասելով, նա ինքն էր գրել, բայց հանդուցեալի անունից, մի երկու ժամ նրա մահից առաջ, որը և ստորագրել էր թուղթը: Բովանդակութիւնը այն էր, ինչ որ վերև բերած է Կ.-ի սպանութեան մասին: Միայն աւելցրած էր, դարձնալ հանդուցեալի անունից, որ իշխանութիւնը ոչ թէ չը կասկածի այդ սպանութեան մէջ, որովհետև ոճրագործը եղել է անյայտ աւազակ: Այդ «միամտութեան թուղթը» մեզ բողոքովին միամտացրեց, որ Կ.-ի ազգականների պատմութիւնը նրա սպանութեան վերաբերմամբ չինքնու է և հնարած՝ իսկական ոճրագործի անունը ծածկելու նպատակով: Յետոյ, քննութիւնը պարզեց, որ այդ իսկական ոճրագործը եղել է Կ.-ի հարստի և անբաժան եղբայրը: Սպանութեան շարժառիթը եղել է այն, որ հանդուցեալը մի ինչ որ քանի համար ծեծել էր երբօր փորձանաակ որդուն. երբխայի լաց լինելու ժամանակ մտնում է ստուն հայրը, որը,

ձև են երկու-երեք անգամ, իսկ կուլտուրան համարեն նոյնն է մնացել մեր երկրի բոլոր գիւղերում, եթէ աչքի առաջ չունենանք չնչին բացառութիւնները:

Տեղական կարեքը ճնշել է գիւղացուն: Եւ նա գիմել է ու դիմում է դէպի քաղաք: Ինչու նա քաղաք է գնում, այդ յետոյ: Փաստը նա է, որ գիւղն ընկնում է:

«Մշակ»-ի №53-ում, «Մամուլ» վերնագրի տակ նորից ընդգծված է այդ երեկոյնը: Այնտեղ օրինակներ են բերված և ցոյց տրված, որ ոչ միայն կովկասի գիւղն է ընկնում, այլ քայքայվում է և պարսկահայ և թիւրքահայ գիւղը: Ասում են, որ մարդկային պատմութիւնը կրկնութիւններ չէ սիրում: Սուտ է: Միշտ մի և նոյն պատճառներն արտաբերում են մի և նոյն երեկոյնները: Այդ դեռ ոչինչ: Յաճախ արտաբերում իրարից խիստ տարբեր պատճառներ ծնեցնում են միատեսակ երեկոյններ:

Կովկասի հայ գիւղն ընկնում է իր բնական զարգացման օրէնքների հիման վրա: Այդ ձևով ընկել են միջին դարերից սկսած մինչև մեր օրերը անգլիական, ֆրանսիական, գերմանական և այլ կուլտուրական երկրների գիւղերը: Մենք ոչ երբմանիկ, ոչ էլ դժբաղդ բացառութիւն ենք կազմում կուլտուրական հասարակութիւնների անտեսական ու հասարակական զարգացման օրէնքներից:

Իսկ պարսկահայ գիւղն ընկնում է ոչ բնական զարգացման օրէնքների հիման վրա: Նա ընկնում է մի սօցիալ-անտեսական բարդ պատճառի, բարդ շարժման ու հիւանդական երեկոյնի ազդեցութեան շնորհով: Նրա քայքայման պատճառը նման չէ կովկասեան գիւղի ընկնելու պատճառներին:

Հետաքրքիր է համառոտակի ընկնել, հետազօտել այդ երկու անկումը: Դրանցից մէկին մենք տալիս ենք բնական մաս անունը, իսկ միւսին կոչում ենք կրկնակալական փայլաւոր:

Խմանալով նրա լալու պատճառը, պատից վերցնում է դաշտը և դուրս գալով բակը, որտեղ գտնվում էր եղբայրը, առանց մի խօսք արտասանելու, խրում է դաշտը նրա փողը: Վիրաւորվածին տանում են տուն, որտեղ խեղճը մի քանի ժամից յետոյ մտնում է: Այդպէս, «միամտութեան թուղթը» խոշոր գիւղ կատարեց Կ.-ի սպանութեան գործի մէջ, բայց ոչ յօգուտ յանցաւորի, ինչպէս կարծում էին նրա միամիտ ազգականները և բարեկամները, այլ, ընդհակառակը՝ նրա դէմ:

Եւ առհասարակ նկատվում է, որ հայ գիւղացիք շատ անընդունակ և անփորձ են մի որ և է յանցանք ծածկելու համար: Թուրքերը, ընդհակառակը, այդ գործում մեծ ընդունակութիւն և հմտութիւն են ցոյց տալիս: Երբ նրանք ցանկանում են մի որ և է յանցաւորի ծածկել, պաշտպանել, իսկ այդ լինում է գլխաւորապէս այն դէպքերում, երբ երկու կողմերի մէջ (յանցաւորի ու յանցանքից տուժողի) հարաբերութիւնը ճանապարհորդներին է կայանում, այն ժամանակ ընկնելու շատ դժուար է գործը պարզել: Այդ պատճառով թրքաբնակ տեղերում աւելի ևս հարկաւոր է քննութիւնը կատարել խիստ արագ՝ մինչև կողմերի մէջ հարաբերութիւն կայանալը:

Բայց, տարբարախտաբար, այդ մեղ մօտ անկարելի բան է, գլխաւորապէս վատ ճանապարհների և մի քանի ուրիշ հանգամանքների շնորհիւ: Ի՞նչ անէ խեղճ ընկնելը, երբ ոճրի մասին նա շատ ժամանակ տեղեկութիւն է ստանում 5—7 օրից, անհնարաւոր 3—4 օրից յետոյ: Եթէ մինչև անգամ կրկնաբերք, որ ընկնելը, տեղեկութիւն ստանալուն պէս, իսկոյն նստում է ձի և թուղթ յանցանքի տեղը, այդ դէպքում էլ նա կարող է սկսել քննութիւնը յանցանքը գործելուց ոչ վաղ, քան մի շաբաթից յետոյ: Բայց այդպիսի դէպքեր միայն բացառութիւն են համարվում: Իսկ առհասարակ մեղ մօտ ընկնելները այն գաւառներում, որտեղ ճանապարհները վատ են, իրանցից անկախ պատճառներով, սկսում են քննութիւնը յանցանքը գործած օրից 2—3

Այդ պէտք է լինի մեր հետեւալ յօդուածներին ներքին:

Իսկ խոշոր, շատ խոշոր երեւոյթ է մեր հասարակական կեանքում:

Նրա մասին գրելիս, մինչ այժմ աւելի շատ մարդիկ ողբացել, արտասովել են: Գրողներին առհասարակ գրողներ, զբաղեցրել է զգացմունքը: Գնահատութիւնը, պատճառների ուսումնասիրութիւնն անգամ կատարվել է բուն զգացմունքով... Նոյն իսկ որոշ կանխակալ սիրով, նախօրօք ունեցած բուն համակրանքով դէպի գեղը—դէպի այդ մարդկային հովանաւորներն, որոնք, ուր ամեն բան մարդու, ասողով ու սուրբ է երեւակայի:

Մեր կարծիքով, սխալ է հասարակական հարցերի ժամանակ այդպիսի սուրեկտիվ մեթոդ գործածելը: Ինչ կարելի տարվել զգացմունքներով: Միայն զգացմունքները վատ դեկլամար են հասարակական հարցերի քննութեան մէջ:

Պէտք է խոր կերպով ընկնել, վերլուծել երեւոյթները, դուրս բերել, առաջ մղել նրանց միջից այն մասերը, որոնք հասարակական կեանքի զարգացման երկար լուրջ կայրի օրէնքներին հիման վրա անպատճառ պիտի աճեն, մեծանան, որոնց պատկանելու է ապագան:

Երբ մի անգամ մենք կընդգծենք, կը շեշտադրենք երեւոյթների այդ ապագայ ունեցող մասը, այնուհետեւ կը դերանայ հրապարակախօսի դերը: Այնուհետեւ հարգար ու մի վայրկյանցիաներով կը բարոյանք այդ ուղղութիւնը, կը հարկենք այդ ապագայի տէր դասակարգ երեւոյթի ուղին, կը դերացնենք նրա որդեծուծութեան ցաւերը:

Ամենից առաջ հրապարակախօսը դէն պիտի շարժուի կանխակալ համակրանքները և պէտք է հանդիսանայ լուր մի վերլուծող, մի անսիրտ ընկալաւոր: Նա պէտք է պատահէ, հայեցիկ հասարակական երեւոյթները լուրջ կայր անողորմ օրէնքներով թիւթակներով ու թիւթակներով: Հանէ նրանց միջից մերկ ճշմարտութիւնը՝ առանց համեմատելի:

Երբ այդ վերլուծական դասան գործը կը վերջանայ, այն ժամանակ պէտք է սկսէ զգացմունքը, գեղեցիկը, «լայն ու խնդրալ»: Իսկ մինչև դրա ճշմարտութեան գիւտը—«ոչ լայ, ոչ խնդրալ, այլ հասկանալ»:

Իրենք այժմ դէպի մեր հարցը, առաջնորդվելով այդ սկզբունքով:

Ստամպ

ՆԱՄԱԿ ԿՈՐՈՅՑ

Ապրիլի 5-ին

Մեղանում կարելի է ասել, որ դեռ կատարեալ ձեւ է. սաստիկ պաղ բամբակները անպակաս փչում են, փոթորիկը և ձիւնը շարունակվում են: Դեռ Ծաղկազարդի կերակի օրը մի այդպիսի ձիւնախառն փոթորիկից յետոյ, մինչև Զատիկ օրերը անձրևներն էին շարունակվում: Մենք կարծեցինք թէ արդէն պարուն է. բայց ահա Յարութեան երրորդ օրը դարձեալ ձիւն է, բամբ և այնպիսի վատ եղանակ, որ ամենից դուրս չէր կարելի գալ: մի բանի օր պարզեց, բոլոր ձիւնները հալվեցին, դաշտերում սկսեցին աշխատանքը, բայց յանկարծ, ապրիլի 4-ին, շարժութ օրը սկսեց դարձեալ ցուրտ բամբ, ձիւն և փոթորիկ և տեղե մինչև կիրակի գիշերը, և միայն այսօր օրը բացվեց:

Երկիրը ենք կրում, որ ցանքերը կարող են մըսել այս վատ ցրտերից: Դեռ մի ութ օր է հարկաւոր, որ բոլոր ձիւնը հալվի, դաշտերը մի քիչ չորանան, որ հնար լինի աշխատանքները վերականգնել:

Քաղաքիս փողոցներում խիստ ցեխ է. հրակողութիւնը շատ սակաւ է. թէև դիօրնիկներ կան, բայց մարդուներ չը կան:

Այսօր, առաւօտեան ժամը 11-ին, տեղիս յունաց եկեղեցում հոգեհանդիսատ կատարվեց ծովապետ Ս. Օ. Մակարովի և «Պետրոսով-յովկա» զբաղակրի բոլոր օֆիցէրները և զինուորների համար, որից յետոյ ծնկաչոք մաղթանք կատարվեց առաջին գործի աջողութեան համար: Ներկայ էին նախագահները, իր օգնականը, բերդի կամիւզանալը, ժամադրմանիայի հրամանատարը և ուրիշ շատ աստիճանաւորներ ու ժողովրդի բազմութիւն, բազալային զգրոցի երկուստ անդերը:

Առևտուրը ընկած է, որովհետեւ երթևեկութիւնը դիւրեւոր գծաւորացի է ձիւնների հալվելու պատճառով: Հացի գինը 2 1/2-ից 3 կոպ. բարձրացաւ, ալիւրը նոյնպէս պուրին 15—20 կոպէկով: մի գինը թէև 8 կ. է նշանակված, բայց ով է հարցնողը, ծախում են 9—10, մինչև անգամ 11 կոպէկով, նայելով թէ ում են ծախում:

Իրիֆտերիս հիւանդութեան մի բանի դէպքեր եղան, որի պատճառով պ. ոստիկանապետը պաշտօնապէս յայտարարեց ի գիտութիւն հասարակութեան:

Մ. Ոսկանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՔ

Ինչպէս տեղեկացանք եկողներէց, թիֆլիս-Ալեքսանդրօպոլ-Կարս գծի վրա, սկսած Մեծ-Ղարաբաղից, ահագին քանակութեամբ ձիւն է եկել: Առանձնապէս սաստիկ է եղել ձիւնը Ջալուրի տուննկի բերաններում և Արգինայի ու Բաշ-Քեաղիկարի մէջ տեղերում: Այդ տեղերում գնացքներն ուշացել են 10 ժամ և նոյն իսկ մի ամբողջ օր, մինչև ձիւնի մաքրելը:

Մտնուդի համար նշանակված ուսուցիչները կեղծելու հասել է բաւական խոշոր չափերի և դեռ սպասուում է օր օրի վրա աճել ու զարգանալ: Շուտով այնպէս կը լինի, որ հրապարակում ոչ մի անխառն, մարդու ուսուցիչը զբնդու հնար չէ լինի: Հասարակական առողջութեան սպանաւորող այդ ամբողջի կեղծարարութեան դէմն առնելու համար վարչապետի բժշկական վարչութիւնը թողլուութիւն է խնդրել և ստացել, որ ապագայէ կամ յայտարարէ տեղեկան ոստիկանական լրագրի մէջ այն անձերի և հաստատութիւնների անունները, որոնց միջոցներով մէջ կեղծիք լինելը կապացուցանէ բժշկական բարեխղճ քննութիւնը: Դա մի հիանալի միջոց է, որ մտածել է վարչապետի բժշկական մարմինը: Պէտք է հրապարակ հանել, բոլորին ասել, տարածել կեղծարարների անունները, որ յաճախորդները զբողանան, որ կեղծարարներին ներթափանցիկ հասնի, բացի բարոյական պարզանքը: Գուցէ դրանով աճող կեղծարարութիւնը մի քիչ սանձանջարվի: Սորհուրդ կը տայինք մեր քաղաքային վարչութեանը լաւ մտածել այդ խելացի միջոցի մասին և, եթէ հնարաւոր է, գործադրել մեղանում է:

Ապրիլի 6-ին Ներսիսեան զպրոցում սկսվեցին վեցերորդ դասարանի տարեկան հարցաքննութիւնները: Այս տարի քննութեան են ենթարկվում, բացի այն աշակերտներից, որոնց մասնակարծական ժողովը յարգելի պատճառներով քննութիւններից ազատեց, 22 աշակերտ, որոնցից 4-ը Շուշու փակված թեմական զպրոցի աշակերտներից են:

Ապրիլի 5-ին իշխան կատալարաչապետի հրամանով նշանակվել են Գործի քաղաքի քաղաքային վարչական համար 15 լրագրողներ: Անցեալ տարի լրագրողներ ընտրելու համար նշանակվել են Գործում երկու ընդհանուր ժողովներ, բայց Կովկասում ամեն տեղ ամեն ինչ

սովոր, ուղարկում է ընկերներից երկուսին գիւղը իմանալու, թէ ով կայ այնտեղ իր թըշնամիներից, աւազակները հանդիպում են գիւղի ծայրում այդ թշնամիներից մէկին և պահանջում են անմիջապէս դնել իրանց հետ Ներսի մօտ: Երիտասարդ բեզբ ակամայ հպատակում է դրանց պահանջին, բայց ճանապարհին հանում է զբանից աւորճանակը և աւազակներից մէկին սպանում, միւսին էլ զիրաւորում է իսկ ինքը փակում գիւղը: Երբ այդ լուրը համար է Նաբիի ականջին, կատալարաչապետը աւազակապետը պաշարում է իր խրամով գիւղը. աւազակների ու բեզբերի մէջ սկսվում է հրացանաձգութիւն, որը սակայն առանց գոհի է վերջանում մութը շուտ վրա հաննելու պատճառով: Միակ վերաբողվածը լինում է Իմայիլը, այն էլ իր յիմարութեան շնորհիւ: Պատմում են, որ հրացանաձգութեան ժամանակ, երբ գիւղակները կարկտի պէս թափվում էին աւազակների կողմից, Իմայիլը իրան համար միամտորար վազում էր քակում այս ու այն կողմը. ոչ ոք չէ կարողանում համոզել նրան մի տեղ թագ կենար: Վերջը ստանալուց յետոյ միւս օրը հարեմ են հրաւիրում նրան բժշկելու, բայց Իմայիլը հրաժարվում է բժշկելուց և վերջը մի քանի ժամանակից յետոյ ինքը իրան անցնում է: «Եթէ մի պիտանի մարդ լինէր», աւելացրեց Մուրադխանը, «անկասկած, կը մեռնէր, իսկ այդ «բայրաշը», ինչպէս տեսնում էք, մինչև հիմա էլ ողջ և առողջ է»:

Մուրադխանի այս պատմութիւնը մեզ յիշեցրեց Նաբիի կնոջ պատկերը: Դա մի երկարաճառակ և գեղեցիկագէտ կին էր, մօտ 40—45 տարեկան—իր ամուսնու հակապատկերը, որը, ինչպէս պատմում էին, եղել է կարճատեղի և անպիտան: Նա մեղադրվում էր մի քանի գործերում այն բանի համար, որ գտնվելով Նաբիի աւազակախմբում, իր թէ մասնակցել էր մի քանի աւազակութիւններին և հրացանաձգութիւններին: Նա երկար ժամանակ բանաւարկված էր և երբ բանտից ազատ-

լափող անտարբերութիւնը դէպի հասարակական գործերը չէ թողել, որ նշանակված ժողովները կազմվեն. երկու անգամ էլ ժողովները չեն կայացել, որովհետեւ ժողովը կայացած լինելու համար օրէնքով որոշված թիւով ձայնաւորներ չեն եկել: Իսկ քաղաքային կանոնադրութեան 54-րդ յօդուածի և 1898 թ.ի ապրիլի 28-ի միջխորհրդի կօմիտէի Բարձրագոյն հաստատված որոշման 6-րդ կէտի հիման վրա՝ երբ երկու անգամ ձայնաւորների որոշված թիւը ներկայ չէ լինում և ընտրութիւններ չեն կատարվում, տեղական բարձր իշխանութիւնը նշանակում է պաշտօնականներ իր բարեհաճութեամբ:

Վարդիկալկազի ճանապարհի ձիւնով ծածկված լինելու պատճառով թիֆլիսի և Վարդիկալկազի միջև հարգրակցութիւնն ընդհատվել է: Այդ պատճառով ահա երրորդ օրն է մայրաքաղաքի պոստը չէ ստացվում մեզանում:

Ապրիլի 7-ին, Ներսիսեան զպրոցի նախաձեռնութեամբ, թիֆլիսի ս. Նշան եկեղեցում ըստ սովորականին պատարագ և հոգեհանգիստ կատարվեց զպրոցի բարեբաւ հանգուցեալ Աւետիք Փիլոսոֆի մահվան տարեդարձի օրը: Հոգեհանգիստին ներկայ էին զպրոցի ուսուցիչները և աշակերտները:

ՎԱՂԱՐՇԱՊՍՏԻՑ մեզ գրում են. «Ձեռն եկած առատ ձիւնն ու մարտին տեղացած յորդառատ անձրևները յոյս էին ներշնչում երկրագործ ժողովրդին և խոստանում բերրի տարի. սակայն քննութեան քանակաւորներն անպատեղի են: Ապրիլի 3-ին երեկոյեան եղանակը յանկարծակի փոխվում է, իսկ կիրակի առաւօտեան սկսում է տեղալ ձիւնախառն անձրև, որ երեկոյեան դէմին բոլորովին ձիւնի փոխվեց. արշալոյսին էլ թիթեւ ստանամանիք արեց: Կանաչած ու կոկոնած ծառերը ստացել բերեցին ծածկվեցան. այսպիսով ծառապտուղների մեծ մասը ոչնչացաւ, իսկ թէ խաղողի այգիները որչափով վնասվեցան, դեռ անկարելի է որոշել: Նոյն արհաւիրքի ենթարկվեցին շրջակայ գիւղերն էլ: Լեռների վրա ձիւնի առատ շերտ աւելացաւ»:

ԳՁԱՐՇԱՊՍՏԻՑ մեզ գրում են. «Մարտի 30-ին, երեքշաբթի, Չատիկի երրորդ օրը դերասան պ. Յ. Ստեփանեան, տեղիս սիրողների մասնակցութեամբ տուեց մի ներկայացում: Ներկայացրին «Պէպօ» Գ. Սունդուկեանի յայտնի

վեց, Զ. գաւառի քննիչներին այցելութիւն արեց և յայտնեց իր խորին շնորհակալութիւնը նրա հետ արգար կերպով և մարդասիրաբար վարվելու համար:

Յիշեալ օրը մենք, անցնելով Խօջանար, հասանք Ս. գիւղը, որտեղ գործ ունէինք կատարելու և պէտք է գիշերէինք. արդէն մութը ընկել էր: Մեզ տարան մի մեծ, բայց խոնավ խրճիթ, որը, երևի, նոր էր շինում: Ես խնդրեցի թարգմանիկ պատուիրել, որ այս երեկոյ գոնէ փրաւի տեղ մի ուրիշ կերակուր պատրաստեն: Շուտով եկաւ Մուրադխանը, որը տարել էր ձիւնը տեղաւորելու և յայտնեց, որ այս երեկոյ նա կամենում է մեզ սուպ ուտացնել, որ ինքը լաւ սուպ եփել գիտէ և այն: Մուրադխանի առաջարկութիւնը մեծ ուրախութիւն պատճառեց թէ ինձ և թէ թարգմանիկ. ամբողջ շարժութ էր, ինչ մենք սուպի համ չէինք ստել:

Իրկերտում ճանապարհորդութեան ժամանակ մենք սովորաբար ընթրում էինք ժամը 9-ին, ամենաուշը 10-ին: Բայց այս անգամ սուպի շնորհիւ ստիպված էինք սպասել մինչև ժամի 12-ը: Ժամը 12-ից մի քիչ անց վերջապէս բերին մեր սուպը: Բայց, Տէր Աստուած, այս ինչ տեսակ սուպ էր: Բոլորովին անհամ ու անալի մոխրագոյն շուր էր, որի մէջ պտուղ էին բրնձի մի բանի հատիկներ:

—Այս ինչ տեսակ սուպ են պատրաստել, հարցրի ես Մուրադխանին:

Նա պատասխանեց, որ ինքն էլ չը գիտէ, որովհետեւ այնտեղ, որտեղ նա պատրաստել էր սուպը, լոյս չը կայ: Հիմա ամեն ինչ պարզվեց. Մուրադխանը պատրաստել էր իր սուպը առանց լոյսի, միտնում և ամեն ինչ կարելի էր սպասել այդ շարաբաստիկ սուպի մէջ: Մենք այս անգամ սոված քնեցինք և պատուիրեցինք Մուրադխանին միւս անգամ այլ ևս սուպ չեփել, այլ եփել իր սովորական և սիրելի փրաւը և ոչ առանց լոյսի:

(Կը շարունակվի)

շարժութ, կամ նոյն իսկ մէկ-երկու ամիս անցած: Ոտք չը կայ, որ այդ ժամանակամիջոցը կատարեալ բաւական է երկու կողմերի մէջ հաշտութիւն կայանալու համար: Ահա գլխաւորապէս ինչով է բացատրվում, որ այդ ձեւով կատարվող քննութիւնները ահագին մեծամասնութիւնը դադարեցնելու է դատարանի կողմից յանցաւորին չը գտնելու պատճառով՝ քրէական դատավարութեան օրէնսդրութեան հոչակաւոր 277 յօդուածի հիման վրա:

II

Ամառը վերջացել էր: Բաւականաչափ քննութիւններ կային կատարելու: Ես ձեռնարկեցի մի տասը օրվայ ճանապարհորդութիւն տեղի ու տեղը քննութիւն կատարելու: Ինձ և թարգմանիկ համար դա մի ծանր լուծ էր երկար ձիւնառնի և գիւղական կեանքի անպարտաւորութիւնների պատճառով: Բայց Մուրադխանի ուրախութեանը չափ չը կար: Նա չէր կարողանում ծածկել իր հրճուանքը: Պատճառը պարզ էր. այդ ժամանակամիջոցում նա գիւղերում թէ ինքն էր կերակրվում և թէ իր ձիւնը կերակրում. միւս կողմից էլ, մեզ հետ ճանապարհորդելով, նա անհամեմատ ազատ էր զգում իրան, քան եթէ կատարէր ուստիկանական ծառայութեան մէջ իր սովորական պարտաւորութիւնները: Յիշում եմ, որ Մուրադխանը, որ գիւղում որ ինչէինք, թէ ճաշին և թէ ընթրիքին միշտ փրաւ էր ուտացնում մեզ. փրաւ ուտելուց մենք կատարեալ յոգնել էինք, թէպէտ այն էլ պէտք է խոստովանել, որ թուրք գիւղերում ուրիշ կերակուր դժուար էր պատրաստել. իսկ ինքը Մուրադխանը ամեն անգամ մեծ ախորժակով դատարկում էր ամբողջ փրաւն:

Մի օր անցնում էինք Խօջանար գիւղի միջով մի ուրիշ գիւղ: Չը նկատեցի որտեղից դուրս եկաւ և սկսեց վազել մեր ձիւնի յետեւից մի շատ տարօրինակ երիտասարդ, մօտաւորապէս 18—20 տարեկան. նա համարեալ թէ մերկ էր. հագին ունէր միայն մի շապիկ

և մի պատուած արխաւուզ. գլուխը անչափ փոքր էր, 4—5 տարեկան երիտախի գլխից ոչ աւելի մեծ: Մուրադխանը սկսեց նրա հետ խօսել, բայց խօսում էր հեզօրէն այնպէս, ինչպէս սովորաբար խօսում են խելագարի հետ: Երիտասարդը, որի անունը, ինչպէս երևում էր Մուրադխանի խօսակցութիւնից, Իւմայիլ էր, արտասանում էր անկապ և անսիրտ խօսքեր: Գոնէ մեզ այդպէս էր լուծ, բայց Մուրադխանը, չը գիտեմ ինչպէս, հակառակում էր նրա ստանդ իմաստը: Վերջը, երբ Մուրադխանը յոգնեց Իմայիլի հետ զրուցելուց, նա առաջարկեց վերջինիս վերադառնալ գիւղը. բայց Իմայիլը, ոչ մի ուշադրութիւն չը դարձնելով, շարունակում էր վազել ձիւնի յետեւից. Մուրադխանը սկսեց հայոնել և երբ այդ միջոցն էլ չօգնեց, նա վայրկեանաբար հանեց թիկունքից հրացանը և ապառնաց Իմայիլին գնդակահար անել, եթէ նա անմիջապէս չը վերադառնայ: Այդ սպանալիքը ունեցաւ իր բարեբար ազդեցութիւնը. Իմայիլը կատուի պէս սղմվեց և ձեռքերով այլաբանական նշաններ անելով, շտապեց ճանապարհով դէպի գիւղը:

Երբ Մուրադխանը հասաւ մեր ետեւից, ես նրան հարցրի, թէ ով է այդ Իմայիլը: Նա պատմեց հետեւալը. «Դա մի ունեւոր բեզբի որդի է. ծնած օրից նա պտուշ է. ուշադրութիւն երկար տանը չէ կարող նստել, այլ թափառում է այս ու այն կողմը: Այլ ոտի վրա նա գնդակի մի վերջը ունէր ստացած, որից առանց բժշկվելու ազատվել է: Այդ վերջը նա ստացել էր 189... թ. այն ժամանակ, երբ հոչակաւոր Նաբիի աւազակախումբը հրացանաձգութիւն էր ունեցել Խօջանարի բեզբերի հետ: Նաբիի և այս բեզբերի մէջ վաղուց անհաշտ թշնամութիւն կար. մինչև անգամ ստում են, որ Նաբիի աւազակ լաւնալու պատճառը նրանք են եղել և նրանց շնորհիւ էլ Նաբիի կինը նստած էր բանտում: Մէկ օր Նաբին, անցնելով իր խմրի հետ Խօջանարի մօ-

Հոմերիան և «Ընտանեկան փոթորիկ» վոլը- վրը: Խաղն ընդհանրապես անցաւ լաւ: Պ. Ստեփանեան լաւ էր Պէպօի դերում: Նոյն օրը սիրողները և գերասանը առւին հեռագիրներ պ. Սունդուկեանին «Պէպօի» ներկայացման առի- թով: Ստեփանեան մտադիր է մի քանի ներ- կայացումներ էլ տալ: Ցանկանում ենք պարո- նին աջորդութիւն»:

ԲԱՅՈՒՄԻՅ մեզ գրում են. «Երէկ, ապրիլի 4-ին, «Երկաթէ թատրոնում» օր. Վարդուհիւն, տեղական սիրողների մամուլացութեամբ, ներ- կայացրեց Ա. Չիլիօի «Ընտանեկան գաղա- նիք» 3 գործողութեամբ կոմիդիան: Ներկա- յացումը թէև նշանակված էր երեկոյան ժամը 8 1/2-ին, բայց, ըստ հայկական սովորութեան, սկսվեց համարեա մի ժամ ուշ, չէր նայած, որ նշանակված ժամին թատրոնը լի էր արդէն: Ներ- կայացումն անցաւ շատ աջող. սիրողներն ընդ- հանրապէս բարեկրօնութեամբ էին վերաբեր- վի գործին. իրանց մտածված ու խելացի խաղով շատ լաւ տպաւորութիւն թողին հա- տարակութեան վրա: Թատրոնը, ինչպէս վերը յիշեցին, լի էր: Բայց թուով եղանակն էլ այդ օրը կարծես սիրով էր վերաբերվել սիրողներին, իր պարբերական անձնակազմով չէր խանգարել փափկատուն տրիկներին ու օրիորդներին թատրոն գալու: Գովուի է օր. Վարդուհիւն նա- լաճեանութիւնը, սիրողների եռանդը: Ցան- կալի է, որ սիրողները չը բաւականանային այդպիսի պատմական ներկայացումներով, այլ ոգևորված իրանց բարոյական ու ինքնու- կան աջորդութեամբ աշխատելու յաճախ աշո- դեցնել ներկայացումներ, ընտանեկան երե- կայիններ, որով մեծ բաւականութիւն պատ- ճատած կը լինեն տեղին հասարակութեան»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԵՏԱՐԱՅՄԻ ԵՐՈՐԸ

Ելիզբ Բեկլիի կարծիքը: Հռչակաւոր աշ- խարհագիր էլիզբ Բեկլիի տպի է «Revue» հանդիսում մի յօդուած, որի մէջ ասում է, թէ «Արեւելեան-ասիական պատերազմը անպակ- փովորութիւններ կը մտցնէ աշխարհի քաղա- քական, տնտեսական և սոցիալական աշխար- հագրութեան մէջ, իսկ իր հաւանական հետե- ւանքներով, այդ պատերազմը, իր կարեւորու- թեամբ հանդիսանում է մինչը այն մեծագոյն վէճերից, որոնց մասին ճանաչում է պատմու- թիւնը այն օրից սկսած, երբ մի և նոյն արեւ- եկեցի հոնները թափվեցին Եւրոպայի վրա և կործանեցին հոռմէական կայսրութիւնը»: Այս հռչակաւոր աշխարհագիրը շարունակում է. «Նապոլեոնիցները, ուսումը և նրանց հետ Արեւելի և Արեւմուտքի ազգերը տեսնում են այս պատերազմի մէջ երկու ցեղերի, երկու բոլորովին հակադիր աշխարհների ընդհարու- մը: Այդ հայեացքը իրերի վրա միակ կանո- սունում է: Չինացիները, իհարկէ, չէին կարող մտանալ ոչ այն նուազանցումները, որոնց ենթարկվեցին 1894 և 1895 թեւերին, ոչ ևս իրանց կրած կորուստները, բայց նրանք ա- լելի շուտ կը ներքին վերադարձնեն իրանց դե- ղին կործան, քան Եւրոպացիներին: Չինաստա- ղը շատ լաւ է հասկանում, թէ այն գործը, որի պատասխանութեան համար դուրս է եկել Նապոլեոնի, իրա, Չինաստանի սեփական գործն է: Չինաստանը արթնուն կիբարով հետևում է մանրամասն ինչորի կազմայցման և, գատա- րապէս լուծութեան, նա կարող թողի է Նա- պոլեոնի, որ գործում է բոլոր արեւելեան- ասիական ազգերի անունով, որոնք այսօր բու- լորովին համերաշխ են միմեանց հետ: Կոռի շրջանը ունի իր ճիշդ սահմանները—այդպէս հաւատացնում են զիլիւստանները—բայց, հա- կառակ նրանց ձեռք առած միջոցներին, զգաց- վում է, որ Միջին Կայսրութեան բախտը անխղիչ կերպով կապված է Մագոլ Արեւելի երկրի բախտի հետ»:

Հաստատելով այդ հիմնական կէտը, Բեկ- լի «գեղին վտանգին» աւելի լայն միտք է ընծայում, քան ուրիշները: Նա հաւատացած է, թէ հասել է վրէժխնդրութեան ժամը, թէ պակաս ազգերը ձուլվում են մի ձգտման մէջ թօթափել իրանցից Եւրոպացիների ճնն- շուտը: Նրանք, որոնք Պէկլիում հրատարա- կում են այս սկզբունքը «Չինաստանը չինա- ցիների համար» գտնում են կրկնողներ և ու- բիւ առիական ազգերի մէջ: Ինչ էլ որ մտա- ծեն Նապոլեոնի գաղտնից Անգլիայի ձախ- տալիս զեկապարհները, բայց ճիշդ է այն, որ նաև Հնդկաստանի ընդհանր նայում են եա- պոնացիների վրա, իբրև իրանց պատարար- ների վրա: Ամբողջ Ասիան ասում և արհա-

մարնում է Եւրոպային: Հնդկաստանում հայ- րենասէր-յեզափոխականները, որոնք աւելի բարձրացել են, քան սովորաբար կարծում են, դեռ երէկ հետաքրքրվում էին ուսաց գորե- րի շարժումով անդ-հիմալայեան երկրներն- ը: Հեռաւոր-Արեւելքի վրա, իսկ այն «հովի- ները», որոնց Մեծ-Բրիտանիան յանձնել է արածել Հնդկաստանի 300 միլիոն բնիկներին, յուզմունքով նկատում են, որ իրանց խնամ- քին յանձնված ոչխարներից շատերը ինչ որ մի բանի մասին հոգս են տանում Տօկիոյում: Նոյնպէս աշխոյժ հետաքրքրութեամբ են դի- տում այդ պատերազմը և այն ժողովուրդները, որոնք ապրում են Ազգանաստանում, այդ բու- ֆէր-պետութեան մէջ, որ կոչված է, ինչպէս կարծում են Լոնդոնում, պահպանել և պաշտ- պանել Հնդկաստանի անձեռնմխելութիւնը ուսանելի դէմ, որոնք միշտ պատրաստ են ներս խոժիլ անչլիական այդ ամենահարուստ գաղթականութեան մէջ: Եւ այստեղ նոյնպէս, այն է Ազգանաստանում, բնիկների պատրաստ են ողջունել ի դէմ Նապոլեոնի սահական ազգերի անկախութեան պաշտպանին: Վեր- ջապէս, Պարսկաստանը, որը ուսանելը և անդ- տարարին, որ գրւում է զէպի իրան աշո- երկու պետութիւնների ուշադրութիւնը և այդպիսով գտնէ ժամանակաւորապէս հանգա- տութիւն է տալիս իրան»:

Հեղինակի կարծիքով, Եւրոպայում մարդիկ բաւականաչափ չեն լուսարանել իրանց հա- մար «գեղին վտանգի» ծաւալը և նշանակու- թիւնը, թէև նրա մասին շատ են խօսել և գեղ խօսում են: Մի քանիսը հերքում են այդ վտանգը, անուանում են նրան ցնորք, խան- գարված երկաթուղիների արդիւնք և դրանով ցոյց են տալիս պատմութեան օրէնքներին ան- հասկացողութիւն: Միշտ պատմական պրօցէսի մէջ ամեն մի գործողութիւն ընդգրկուածը թիւն է առաջ բերել: Գոյութիւն է ունեցել «սպիտակ վտանգը» Ասիայի ժողովուրդների համար: պէտք է անպատճառ վրա հանել և «գեղին վտանգը» Եւրոպայի ազգերի համար: Ասիայում այնքան շատ անգութ ուժերներ են գործել նրանք, որոնք երկակայում են իրանց բարձր ցեղի ներկայացուցիչներ, որ հատու- ցումը անխուսափելի է: Արեւմտեան-Եւրոպա- կան մարզը, ամբիկիկացին, շատ է ոտնակոխ արել, շատ է անինայ կերպով խելոզել նը- բանց, որոնց նա համարում է ստորին ցեղի մարդիկ: Սկզբի է մեծ դրամայի առաջին գործողութիւնը: Շուտով զօրբերին և նաւա- տօրմերին պէտք է թողնել ազգերի ձախտա- գրի վճարը: Չինաստանում ուսու-եապօնական պատերազմը արդէն շատ կարեւր փոփոխու- թիւններ է առաջացրել: Նապոլեոնի հետ միա- սին, որ բարձրացրել է համա-մտնօրութեան դրօշակը, հանդէս է գալիս Չինաստանը, որ պէտք չեն ոչ պատերազմական պատրաստու- թիւններ, ոչ արմկանայ յայտարարութիւններ: Նրա ոյժերը ամբողջում են ամեն օր, նրա հե- ղինակութիւնը աճում է: Նապոլեոնի սկսած պատերազմը նրա համար հօրութեան աղբիւր է. եապօնացիների մօտ, նրանց պարտում և նրանց զեկապարհութեամբ, նա կը ստանայ ա- մենը, ինչ որ հարկաւոր է իրան, որպէս վի վերակենդանանայ և խօսէ այնպիսի լեզուով, որ վայել է 500 միլիոն բնակիչ ունեցող կայս- րութեան:

Բեկլիին գտնում է, որ պատերազմը շուտ- փել է արդէն և Ֆրանսիային: «Իրողապէս, և Ֆրանսիական Հնդկա-Չինաստանում կատար- վիլ է արդէն բարոյական յեզափոխութիւն: Մենք լսում ենք այժմ Ֆրանսիայում այսպիսի խօսքեր. «Հնդկա-Չինաստանի զինուորական պաշտպանութիւնը անհնարին է. մենք միայն մի միջոց ունենք պահելու այդ գաղթականու- թիւնը, այն է—աշխատել որ մեզ սիրեն»:

Ի վերջոյ Բեկլիը այն կարծիքն է յայտնում, թէ խուսափել կարելի է այն ազէանկերից, որ պատերազմը սպառնում է բոլոր քաղաքակիրթ ազգերին, նրանով, որ Եւրոպան իսկապէս հա- մերաշխ լինի և հրաժարվէ իր «հեթանոսական քաղաքականութիւնից», բայց, կարակացնում է նա, այդպիսի Եւրոպան ցնորք է:

ՄՇԱԿԻ ՀՆՈՒՍԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԵՑ
6 ապրիլի
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Ապրիլի 5-ին ժամանեց փո- ծովապետ Սիլիբով: Նշանակված են—Սիբի- բեան I զօրախմբի հրամանատար գեներալ-

լէյտնանտ Սախարով՝ մանջուրական զօրքի զարտային շտաբի գլխավոր. գեներալ-լէյտն- նանտ բարձր Ֆոն-Շտակիլերեթ՝ Սիբիբեան I զօրախմբի հրամանատար:

ՎԱՆԴԻՎՈՍՏՈՎ. Կայացաւ գլխութեան քոյ- րերի և եղբայրների համար կազմակերպված գաղթականների քննութիւնները: Քննութիւն- անցին աշտուրութեամբ 74 հոգի: Իրանով լայն կերպով գոհացվում է տեղական հիւանդանոց- ների կարգը, ուստի գլխութեան քոյրեր ու- ղարկելու փոխարէն, որ թանգ է նստում և քիչ է հասնում նպատակին, այստեղ մեծ պէտք է զգացվում մի մշտական խմբի հաստատու- թեան, որը ծառայէր երկրին ոչ միայն պա- տերազմական, այլ և խաղաղ ժամանակ, հա- մաճարակների ղէպրում:

ՍԱՆԿՆԻ (Կօրք. Բիւրօ): Անցեալ տարվայ պատմութեան շարժման պետերը Բիզանդի- և Սուզօրէվ յայտնեցին քաղաքացիական գոր- ծակների միջոցով իրանց հպատակութեան մասին: Հիմի փառն խոստացաւ նրանց նե- բուն և ազատ անցը՝ դուրս գալու համար երկրի սահմաններից: Հեռացմանը այդ վեր- ջինների, որոնք դեռ այստեղ են գտնվում, պէտք է ապաստանութեան պետերին վերջա- ցած համարել:

ՏՕՄԿ. Սիբիբական երկաթուղու վարչու- թիւնը երկաթուղիների ընդհանուր վարչու- թեան հարցին պատասխանեց, թէ երկաթու- ղու փոխադրական միջոցների ուժեղացման պատճառով, հնարաւոր է թելը սալ մասնա- լոր ապրանքների ընդունելութիւնը ամեն տեղ, առաջ մինչև Աշխիսի, իսկ յետոյ մինչև Իր- կուսուկ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Ռուսիականութեան աշտուրից բուն 50 հոգուց բաղկացած հոլանդական խմբի պարապլիսին և անդամներին, որոնք գնում էին Լեդնբուրգի շրջանը, բանկերը և պահեստ- ները կողպտելու նպատակով:

Կ. ՊՕԻՄ. Չինալիվիլին սուած ունիւրու- թիւնը քաղաքական բնաւորութիւն չունէր: Սուլթանը վերջին ունիւրութեան ժամանակ սուեց բոլբարական գործակալ Նաչէվիչին պաշտօնական հաւատարմագրում, թէ կը տա- րածէ Բէֆօրմիերի գործադրութիւնը բոլոր վիլայէթների, հետևաբար և Ազրիանայոյսի վրա:

ՍՕՅԻԱ. (Ընդդիմադիր շրջաններից): «Ռո- սիականութեան օրգանը ասում է, թէ կառավարութեան աշտուրից բարեխաղ ա- ւարտման հասցնել բանակցութիւնները Սեբ- բիայի հետ տնտեսական մարային խնդիրնե- րի, ինչպէս և փախտականներին յանձնելու վերաբերմամբ: Մակեդոնիայում ապրող ա- պատմական պարագլուխները յայտնեցին, որ նրանք նազանդութիւն են, եթէ իրանց կը շնորհվի ներուսն: Ներուսն նրանց խոստաց- վեց այն պայմանով, որ նրանք պէտք է թող- նեն թիւրքական հողը և տեղափոխվեն Բօլ- գարիա: Այս պայմանը ընդունեցին պարա- գլուխները: կարծում են, որ դրանով վերջ է տրված բոլոր ապստամբական շարժումներին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Հազարում են, որ հոգեհան- գիտներ են կատարվել փոխ-ծովապետ Մա- կարովի և նրա կորած ընկերակիցների համար Վօրոնէժում, Իրկուսկում, Չիստօպօլում, Սե- միպալտինսկում, Տոսկում և Վրադիմիրում: ՕՐԵՈՒ. Մօսկովեան—Կուրսկի երկաթու- ղով անցաւ հարաւից զէպի Մօսկով Մեծ Իշխանուհի Միլիցա Նիկոլայիվնա:

ՎԱՇԻՆԳՏՈՆ. Պարլամենտն մտաւ մի օրի- նագիծ, որով շնջվում են գաղթականական օրէնքները և չին թոյլատրվում օտար պետու- թիւնների պաշտպանութիւնը օտար շոգենա- ւային գծերին: Յիշեալ պաշտպանութեան ղէպրում կաւելացնվի այն սուբբը, որ վեր- ցնվում է ամեն մի անձից, եկող ոչ ամերի- կական նաւով, մինչև 30 օրվար:

7 ապրիլի
ՕԳԵՍՍ. Ապրիլի 6-ին, Ֆրանսիական Օրի- մեզ» շոգենուով հասան Չեմուրզօի հերոսները «Վարեալի» հրամանատար Փիլիպէ-ադիւ- տանտ Բուզնէվիի հետ, 444 նաւատիրներով, որոնց հետ և Չաուրբաշէվիի, Ստեպանով և Կիլիմով օֆիցէրները ու Վանչուկով բժիշկը: Եկաւ նաև Մեուլի ուսաց դեսպանատան պա- հակախումբը—55 նաւատիրներ Սեվաստօ- պօլ» գլխավորեց: Եկողներին հանդիսա- տար ընդունելութիւն ցոյց տրվեց: Նրանց դիմաւորեց պորտի գլխավոր գեներալ Պերե- լիշինը, որ շնորհաւորեց թանկագին հիւրերին Արքայական շնորհի համար և յանձնեց նա- ւատիրներին ու օֆիցէրներին Գէորգեան խա- չեք, իսկ Բուզնէվի—Բարձրագոյն հրովար- տակ Փիլիպէ-ադիւտանտի կողման համար: Ամ-

բող նաւահանիւտը սիոված էր խուսն ժո- ղովրդով: «Վարեալի» և «Կօրեկցի» կօման- ղաները՝ Բուզնէվիի առաջնորդութեամբ շար- վեցին տախտակամածի վրա: Երաժշտութիւնը նուազեց մարչ և յետոյ օրհներգ: Նաւերը պօր- տում զարգարկեցին դրօշակներով: Առաջինը ափ իջաւ Բուզնէվի: Զօրքերի հրամանատարը երեք անգամ համբուրվեց նրա հետ և ողջու- նեց նրան, ապա ողջունեցին քաղաքապետը, որ ներկայացրեց աղ ու հաց և պատգամաւո- րութիւնները՝ Տուրայի ազնուականութեան և Օրգեսայի շրջանի զօրքերի կողմից: Բուզ- նէվի հանդիպումն ամուսնու և երեխանե- րի հետ սրտաշարժ էր: Կօմանդները ափ իջան: Զօրքերի հրամանատարը շնորհաւորեց հերոս- ներին Արքայական վարձատրութեան համար և առողջութիւն մաղթեց Պագաւոր Կայսրին: Այսօր ծովապնացիները Բուզնէվի առաջ- նորդութեամբ մեկնում են Սեվաստօպօլ: «Ռե- բա» ազգականներով, օրհներգի երգեցողու- թեամբ և երաժշտութեամբ, ծովապնացիները անցան Ս. Նիկոլայ» շոգենաւը և մեկնեցին Սեվաստօպօլ: Ճանապարհ էին դնում զօրքերի հրամանատարը, քաղաքապետը և հասարա- կութեան խուսն բազմութիւն:

ՄՕՍԿՎԱ. Քաղաքային վարչութիւնը որոշեց ճաշ սարքել «Վարեալ» և «Կօրեկց» նաւերի նաւատիրների համար, իսկ օֆիցէրներին ող- ջունել ղումայում և մատուցանել ժէտաններ:

ԲԵՐԼԻՆ. Պօրտ-Արտուրից հազարում են Լոնդօն, թէ ուսական զօրքերի տրամադրու- թիւնը բաւարար է: Ցամաքային զօրքային ան- համբերութեամբ սպասում են զէպեր՝ կուռել հապօնացիների հետ: «Daily Express»-ին հա- զորքում են Վէլ-Պայ-Վէլից, թէ Տօգօի էս- կալարան հեռացել է զէպի Բլոնդա կղզիները Իրբե յենակէտի տեղ:

ՇԱՆԿՆԱՅ. (Բէյո. գործ.): Եապօնական զօրքը բաժանված է արշաւող և գրաւող զօ- րաբաժիններին: Առաջինը, բաղկացած է 45,000 մարդուց, առաջ է շարժվում զէպի Եայու, իսկ երկրորդը, բաղկացած 15,000 մարդուց գրաւ- ված է ճանապարհների բարեկարգելով: Մեու- լում, գլխավոր բանակում կայ 4,000 մարդ: Տեղափոխական գործողութիւնների գլխավոր բանակը գտնվում է Չէմուրզօում: Երկաթու- ղու և ուրիշ ճանապարհների շինութիւնը առաջ է գնում: Կատիօ կղզին ամրացվում է:

ՄԵՆԻԱ. (Բէյո. գործ.) Գէնդանի մարա- տանը ծառայողների մինը հազարում է, թէ ուսաց մի ուժեղ զօրաբաժին գտնվում է հա- բաւային մեծ ճանապարհի վրա: Նա անցկա- ցաւ արևելեան ծովով և հասաւ Սուե-Չին: Այս քաղաքը գրաւած է առաջապահ զօրա- բաժնով: Գլխավոր ոյժերը գրաւեցին Պուկ- չէնը, Գէնչանից 80 մղոց զէպի հիւսիս:

7 ապրիլի
ՎԻԵՆԱ. Այսօր այստեղ հասան Ռեյսեան իշխան և իշխանուհին. երկաթուղու կայա- քանում նրանց իրմաւորեց կայսրը:

ԼՕՆԻՕՆ. (Ռէյո. գործ.) Լօրդերի ժողով: Լօրդ Սպենսեր շնորհաւորեց Լանգօունին, ու- բին դիմաւորեցին բուն ծախարարութիւննե- րով: Ֆրանքօ-անգլիական համաձայնութեան համար: Մինիստրը յոյս յայտնեց, որ այդ համաձայնութեանը կը ծառայէ որպէս օրի- նակ, որ կարող է օգտակար լինել բանակցու- թիւնների ժամանակ ուրիշ պետութիւնների հետ: Այս լօրդերի ժողովը, ինչպէս քիչ ա- ռաջ և համայնքների ժողովը, ընդունեց կա- նավարութեան առաջարկութիւնը գործադրու- լու հնդկական զօրքերը սիրէտական բարդու- թիւնների ժամանակ Հնդկաստանից դուրս: Տիրէտական հարցի վերաբերմամբ Լանգօուն ասաց. «Այժմ կարծեմ կարելի է հասնել այդ հարցի բաւարար լուծման: Տեղի ունեցած անցքերը պէտք է անպօթ կերպով ոչնչաց- նելին տրէտայիների հաւատը զէպի ուսանելի օգնութեանը, այս պատճառով տրէտայիները շուտով խելի կը գան և կընդունեն Անգլիա- յի առաջարկած պայմանները:

ԼՕՆԻՕՆ. Ապրիլի 6-ին արքայական զոյգը վերադարձաւ Կոպէնհագէնից:

ԿԱՏԱՓՍ. «Հօհենցոլէրն» գրօսանաւը գեր- մանական կայսրի հետ միասին հասաւ Կատա- նիա ապրիլի 6-ին:

Կ. ՊՕԻՄ. Սմարում, որ գտնվում է Եփրատի ափին, երկաց խորբա:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Պաշտօնական տեղեկութիւն- ներ Հեռաւոր Արեւելքից ապրիլի 6-ին չին տացված: Նշանակված են—կապիւրգարդնե- րի գնդի հրամանատար Բեզօբրաւով զվար- դիական հեծակների գլխավորային առաջին բրի- գազայի հրամանատար. Մեծ-Իշխան Սերգեյ Ալէքսանդրովիչի ադիւտանտ գնդապետ Իշ- խան Իւսուպով, կոմս Սոււմորոկով—Ընտօսը

